ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

2014 թվականի N - Ն

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ա. ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) բաղադրիչների տեսակները, որոնց անվանումները կարելի է փոխարինել սննդամթերքի տեսակների անվանումով՝ համաձայն N 2 հավելվածի.

3) հիմնական սննդանյութերի և էներգիայի միջին օրական պահանջը՝ սննդամթերքի մակնշման համար՝ համաձայն N 3 հավելվածի.

4) սննդամթերքի սննդային և էներգետիկ արժեքների կլորացման կարգերը՝ համաձայն N4 հավելվածի.

5) սննդամթերքի հիմնական սննդանյութերը էներգետիկ արժեքի վերահաշվարկման գործակիցները՝ համաձայն N 5 հավելվածի.

6) սննդամթերքի առանձին առանձնահատկությունների նշման համար սահմանվող պարտադիր պահանջները՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը շուկայահանված կամ մակնշված սննդամթերքը, սննդային հավելումները և սննդային ֆերմենտները, որոնք չեն համապատասխանում սույն որոշման հավելվածով սահմանված պահանջներին, կարող են շուկայահանվել և իրացվել մինչև դրանց պիտանիության կամ պահման նվազագույն ժամկետի լրանալը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից տասներկու ամիս հետո:

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության կառավարության

2014 թ. ……. …N…. -Ն որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Հայաստանի Հանրապետության սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրվող սննդամթերքի վրա՝ դրա մակնշման մասով:

2. Սույն կանոնակարգը չի տարածվում այն սննդամթերքի վրա, որի արտադրությունն իրականացվում է հանրային սննդի կազմակերպությունների կողմից հանրային սննդի ծառայություններ մատուցելու գործընթացում՝ արտադրման վայրում սպառելու նպատակով, նաև՝ այն սննդամթերքի վրա, որի արտադրությունն իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից մասնավոր օժանդակ տնտեսություններում՝ ոչ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով:

3. Սույն կանոնակարգով սահմանվում են սննդամթերքի մակնշման մասով ներկայացվող պահանջները՝ սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակով՝ սննդամթերքի մասին հավաստի տեղեկությունների առնչությամբ սպառողների իրավունքների իրականացումն ապահովելու վերաբերյալ:

4. Սույն կանոնակարգը կիրառելիս պետք է հաշվի առնվեն սույն կանոնակարգին չհակասող Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի լրացուցիչ պահանջները՝ սննդամթերքի առանձին տեսակների նկատմամբ՝ դրանց մակնշման մասով:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն կանոնակարգում կիրառվում են հետևյալ տերմինները և դրանց սահմանումները.

1) **սննդամթերքի պատրաստման ամսաթիվ՝** սննդամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացի ավարտի ամսաթիվը,

2) **սննդամթերքի տարբերակիչ հատկանիշների մասին տեղեկություններ՝** սննդամթերքի մասին տվյալներ, որոնք վկայում են սննդամթերքի այնպիսի հատկությունների առկայության մասին, որը թույլ է տալիս այն տարբերակել այլ սննդամթերքից, (այդ թվում՝ սննդային արժեքի, ծագման վայրի, բաղադրության, այլ հատկությունների մասին),

3) **թերթ–ներդրակ՝** տեղեկակիր, որի վրա զետեղվում է մակնշվածքը և որը տեղադրվում է սպառողական փաթեթվածքի և (կամ) տրանսպորտային փաթեթվածքի մեջ կամ կցվում է սպառողական փաթեթվածքին և (կամ) տրանսպորտային փաթեթվածքին,

4) **պիտակ՝ տեղեկակիր**, որի վրա զետեղվում է մակնշվածքը և որն ամրացվում է սպառողական փաթեթվածքին և (կամ) տրանսպորտային փաթեթվածքին, այդ թվում՝ սոսնձելու միջոցով,

5) **սննդամթերքի մականշվածք՝** սննդամթերքի մասին տեղեկություններ, որոնք զետեղվում են գրառումների, նկարների, նշանների, խորհրդանիշների, այլ նշագրումների և դրանց համակցության տեսքով՝ սպառողական փաթեթվածքի, տրանսպորտային փաթեթվածքի կամ տեղեկակրի այլ տեսակի վրա՝ սպառողական փաթեթվածքին և (կամ) տրանսպորտային փաթեթվածքին ամրացված, կցված կամ դրանց մեջ տեղադրված,

6) **սպառող՝** ձեռնարկատիրական գործունեության հետ առնչություն չունեցող ֆիզիկական անձ, որը մտադիր է պատվիրել կամ ձեռք բերել սննդամթերք կամ պատվիրում, ձեռք է բերում կամ օգտագործում է այն՝ բացառապես անձնական, ընտանեկան, կենցաղային և այլ կարիքների համար,

7) **սննդամթերքի համար մտածված անուն՝** բառ կամ բառակապակցություն, որը կարող է լրացնել սննդամթերքի անվանումը: Այն կարող է չարտացոլի սննդամթերքի սպառողական հատկությունները և չպետք է փոխարինի սննդամթերքի անվանմանը,

8) **սննդամթերք ձեռք բերող՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ սպառող, որը սննդամթերք է ձեռք բերում ցանկացած նպատակով օգտագործման համար,

9) **փաթեթավորված սննդամթերք**՝ սպառողական փաթեթվածքում տեղադրված սննդամթերք,

Սույն կետով չսահմանված տերմինները սույն կանոնակարգում կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իմաստներով:

III. ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

6. Սննդամթերքը շուկայում շրջանառության մեջ է դրվում՝ դրա մականշվածքը Հայաստանի Հանրապետության սույն կանոնակարգին, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական մյուս այն կանոնակարգերին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է սննդամթերքի վրա:

ԳԼՈՒԽ 2
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
IV. ՄԱԿՆՇՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

7. Փաթեթավորված սննդամթերքի մականշվածքը պետք է ներառի հետևյալ տվյալները.

1) սննդամթերքի անվանում,

2) սննդամթերքի բաղադրություն՝ բացառությամբ սույն կանոնակարգի 29-րդ կետով նախատեսված դեպքերի և եթե Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սննդամթերքի առանձին տեսակների համար այլ բան նախատեսված չէ,

3) սննդամթերքի քանակ,

4) սննդամթերքի պատրաստման ամսաթիվ,

5) սննդամթերքի պիտանիության ժամկետ,

6) սննդամթերքի պահպանման պայմաններ՝ սահմանված արտադրողի կողմից կամ նախատեսված Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով՝ սննդամթերքի առանձին տեսակների համար: Այն սննդամթերքի համար, որի որակն ու անվտանգությունը փոխվում է սննդամթերքը փչանալուց պաշտպանող փաթեթվածքը բացելուց հետո, նշվում է նաև փաթեթվածքը բացելուց հետո պահպանման պայմանները,

7) սննդամթերք արտադրողի անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտադրողի ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու վայրը (այսուհետ՝

արտադրողի անվանում և գտնվելու վայր), ինչպես նաև՝ սույն կանոնակարգով սահմանված դեպքերում՝ արտադրողի կողմից լիազորված անձի անվանումն ու գտնվելու վայրը և ներմուծող կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը, կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ներմուծողի ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու վայրը (այսուհետ՝ ներմուծողի անվանում և գտնվելու վայր),

8) սննդամթերքի օգտագործմանը, այդ թվում՝ դրա պատրաստմանը վերաբերող ցուցումներ և (կամ) սահմանափակումներ, եթե առանց տվյալ ցուցումների կամ սահմանափակումների սննդամթերքի օգտագործումը դժվարանում է կամ կարող է վնաս հասցնել սպառողների առողջությանը, նրանց գույքին, հանգեցնել սննդամթերքի համային հատկությունների նվազմանը կամ կորստին,

9) սննդամթերքի սննդային արժեքի ցուցանիշները՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի VII-րդ բաժնի պահանջները,

10) տվյալներ՝ սննդամթերքում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին (այսուհետ՝ ԳՁՕ),

11) Հայաստանի Հանրապետության շուկայում սննդամթերքի շրջանառության ազգային նշանը,

8. փաթեթավորված սննդամթերքի՝ սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված և գրառման տեսքով կատարված մականշվածքը պետք է զետեղվի հայերեն լեզվով, բացառությամբ՝ սույն կանոնակարգի 59-րդ կետում նշված դեպքերի,

9. Փաթեթավորված սննդամթերքի մականշվածքում կարող են նշվել լրացուցիչ տվյալներ, այդ թվում՝ այն փաստաթղթի մասին, որի համաձայն արտադրվել և կարող է տարբերակվել (նույնացվել) սննդամթերքը, սննդամթերքի համար մտածված անունը, ապրանքային նշանը, ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքներ ունեցողի մասին տվյալները, սննդամթերքի ծագման վայրի անվանումը, լիցենզիա տրամադրողի անվանումը և գտնվելու վայրը, կամավոր հավաստագրման համակարգերի նշանները:

10. Սույն կանոնակարգի պահանջներին չհակասող փաթեթավորված սննդամթերքի մականշվածքին ներկայացվող լրացուցիչ պահանջները կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

11. Ոչ ալկոհոլային խմիչքները, որոնցում կոֆեինի պարունակությունը գերազանցում է 150 մգ/լ, և (կամ) դեղաբույսերն ու դրանց մզվածքները (էքստրակտ), որոնք մարդու օրգանիզմին հաղորդում են տոնուս բարձրացնող ազդեցություն, պետք է մակնշվեն «Խորհուրդ չի տրվում օգտագործել մինչև 18 տարեկան երեխաներին, հղիության և կրծքով կերակրելու ժամանակ, ինչպես նաև՝ նյարդային բարձր գրգռվածությունից, անքնությունից, զարկերակային բարձր ճնշումից տառապող անձանց» գրառմամբ:

V. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓԱԹԵԹՎԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Տրանսպորտային փաթեթվածքի մականշվածքը, որում տեղադրված է սննդամթերքը, պետք է ներառի հետևյալ տվյալները.

1) սննդամթերքի անվանումը,

2) սննդամթերքի քանակը,

3) սննդամթերքի պատրաստման ամսաթիվը,

4) սննդամթերքի պիտանիության ժամկետը,

5) սննդամթերքի պահպանման պայմանները,

6) տվյալներ, որոնք թույլ են տալիս տարբերակել (նույնացնել) սննդամթերքի խմբաքանակը (օրինակ՝ խմբաքանակի համարը),

7) սննդամթերքն արտադրողի անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտադրողի ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու վայրը:

Տրանսպորտային փաթեթվածքում սննդամթերքն առանց սպառողական փաթեթվածքի տեղադրվելու դեպքում՝ նախատեսված արտադրողի կողմից հետագա չափածրարման համար (կոնֆետներ, շաքարավազ և այլ սննդամթերք), տրանսպորտային փաթեթվածքի մականշվածքը, որում տեղադրված է այդ սննդամթերքը, պետք է համապատասխանի սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված պահանջներին:

13. Տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի՝ սույն կանոնակարգի 12-րդ կետով նախատեսված և գրառման տեսքով կատարված մականշվածքը պետք է զետեղվի հայերեն լեզվով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 59-րդ կետում նշված դեպքերի:

14. Տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի սպառողական փաթեթվածքի վրա՝ սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված մականշվածքի մասին, եթե կարելի է իրազեկել այդ սննդամթերքն սպառողներին՝ առանց տրանսպորտային փաթեթվածքի ամբողջականությունը խախտելու, ապա նշված մականշվածքը թույլատրվում է չզետեղել տրանսպորտային փաթեթվածքի վրա:

15. Տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի մականշվածքում կարող են նշվել լրացուցիչ տվյալներ, այդ թվում՝ այն փաստաթղթի մասին, որի համաձայն արտադրվել և կարող է տարբերակվել (նույնացվել) սննդամթերքը, սննդամթերքի համար մտածված անունը, ապրանքային նշանը, ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքներ ունեցողի մասին տվյալները, սննդամթերքի ծագման վայրի անվանումը, լիցենզիա տրամադրողի անվանումը և գտնվելու վայրը, կամավոր հավաստագրման համակարգերի նշանները:

16. Տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի մականշվածքին ներկայացվող, սույն կանոնակարգի պահանջներին չհակասող լրացուցիչ պահանջներ, որոնք կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

VI. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

17. Սննդամթերքի մականշվածքում նշվող անվանումը պետք է թույլ տա այն որակել որպես սննդամթերք, հստակ կերպով բնութագրի և տարբերակի այն այլ սննդամթերքից:

18. Սննդամթերքի առանձին տեսակների համար Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու դեպքում, սննդամթերքի անվանումը պետք է համապատասխանի դրանց պահանջներին:

19. Սննդամթերքի ֆիզիկական հատկությունների և (կամ) դրա մշակման հատուկ եղանակների մասին տեղեկությունները (վերականգնված, ապխտած, մարինացված, աղացած, իոնա–ճառագայթային եղանակով մշակված, սուբլիմացված սննդամթերք և դրա մասին նմանատիպ տեղեկությունները) ներառվում են սննդամթերքի անվանման մեջ կամ տեղակայում անմիջապես անվանման կողքին, եթե նման տեղեկությունների բացակայությունը կարող է մոլորության մեջ գցել սպառողին (ձեռք բերողին): Սննդամթերքի առանձին տեսակներին առնչվող տեղեկություններ ներկայացնելու պահանջները սահմանվում են սննդամթերքի

առանձին տեսակների համար՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով:

20. Սննդամթերքի անվանման մեջ չի թույլատրվում նշել բաղադրիչներ, եթե դրանք կամ դրանց վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները չեն մտնում սննդամթերքի բաղադրության մեջ:

21. Սննդամթերքի բաղադրության մեջ եթե օգտագործվում է համաբուրավետիչ նյութ, ապա այդ համաբուրավետիչով փոխարինված և սննդամթերքի բաղադրության մեջ չներառված բաղադրիչի անվանումը թույլատրվում է ներառել սննդամթերքի անվանման մեջ՝ կիրառելով հետևյալ բառերը. համով և (կամ) բույրով:

22. Սույն կանոնակարգի պահանջներին չհակառող սննդամթերքի անվանումը նշելու համար ներկայացվող լրացուցիչ պահանջները կարող են սահմանվել սննդամթերքի առանձին տեսակների համար՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում:

VII. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

23. Սննդամթերքի բաղադրության մեջ մտնող բաղադրիչները նշվում են՝ սննդամթերքի արտադրման պահի դրությամբ դրանց զանգվածային մասի նվազման կարգով, եթե սննդամթերքի առանձին տեսակների համար Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջներով այլ բան նախատեսված չէ: Տվյալ բաղադրիչները նշելուց անմիջապես առաջ պետք է զետեղվի «Բաղադրությունը» գրառումը:

24. Սննդամթերքի մեջ բարդ բաղադրիչի (երկու և ավելի բաղադրիչներից կազմված) առկայության դեպքում՝ սույն կանոնակարգի 23-րդ կետի պահանջներին համապատասխան, սննդամթերքի բաղադրության մեջ նշվում է բարդ բաղադրիչի կազմի մեջ մտնող բոլոր բաղադրիչների ցանկը, կամ նշվում է բարդ բաղադրիչը՝ բաղադրիչների զանգվածային մասի նվազման կարգով փակագծերում լրացնելու միջոցով: Բարդ բաղադրիչի զանգվածային մասի 2 տոկոս և պակաս կազմելու դեպքում, թույլատրվում է չնշել նրա մեջ մտնող բաղադրիչները, բացառությամբ՝ սննդային հավելումների, համաբուրավետիչների և դրանց բաղադրության մեջ մտնող սննդային հավելումների, կենսաբանական ակտիվ նյութերի և դեղաբույսերի, բաղադրիչների, որոնք ստացվել են սույն կանոնակարգի 36-րդ կետում նշված ԳՁՕ–ների և բաղադրիչների կիրառմամբ:

25. Սննդամթերքում 2 տոկոս և դրանից պակաս զանգվածային մաս ունեցող բաղադրիչների դեպքում, թույլատրվում է դրանք նշել ցանկացած հերթականությամբ՝ այն բաղադրիչներից հետո, որոնց զանգվածային մասը կազմում է 2 տոկոսից ավելի, եթե Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սննդամթերքի առանձին տեսակների համար այլ բան նախատեսված չէ:

26. Սննդամթերքը ներկայացնող բաղադրիչի անվանումը նշվում է սննդամթերքի բաղադրության մեջ՝ սույն կանոնակարգի VI-րդ բաժնի պահանջների համաձայն: Հայաստանի Հանրապետության սույն տեխնիկական կանոնակարգի Հավելված 2-ով նախատեսված բաղադրիչների անվանումները, սննդամթերքի բաղադրության մեջ կարելի է նշել սննդամթերքի համապատասխան տեսակների անվանումների ներքո՝ բացառությամբ դեպքերի, երբ այդ բաղադրիչների անվանումները կիրառվում են սննդամթերքի անվանման մեջ:

27. Սննդամթերքում համաբուրավետիչի առկայության դեպքում, բաղադրության մասին մականշվածքը պետք է ներառի «համաբուրավետիչ (համաբուրավետիչներ)» բառը: Թույլատրվում է չնշել սննդամթերքի համար մտածված անունը՝ սննդամթերքի բաղադրության մեջ համաբուրավետիչների առնչությամբ:

28. Սննդամթերքի բաղադրության մեջ սննդային հավելման առկայության դեպքում պետք է նշվի գործառութային (տեխնոլոգիական) նշանակությունը (թթվայնության կարգավորիչ, կայունացուցիչ, էմուլգատոր, գործառութային (տեխնոլոգիական) այլ նշանակություն) և սննդային հավելման անվանումը, որը կարող է փոխարինվել սննդային հավելման ծածկագրով՝ Համարակալման միջազգային համակարգի (ՀՄՀ) կամ Համարակալման եվրոպական համակարգի (E) համաձայն: Եթե սննդային հավելումն ունի գործառութային զանազան նշանակություն, ապա նշվում է դրա օգտագործման նպատակին համապատասխանող գործառութային նշանակությունը:

Սննդամթերքի բաղադրության մեջ չի պահանջվում նշել սննդամթերքի արտադրության ժամանակ որպես բաղադրիչ օգտագործվող ածխածնի երկօքսիդը՝ սննդամթերքի մականշվածքում «Գազավորված» կամ համանման գրառում ներառելիս:

29. Չի պահանջվում նշել սննդամթերքի բաղադրությունը՝ ստորև նշվածների համար.

1) չկեղևահանված, չկտրատված կամ նմանատիպ մշակում չանցած թարմ մրգերի՝ (ներառյալ հատապտուղների) և բանջարեղենի՝ (ներառյալ կարտոֆիլի),

2) քացախի, որն ստացվել է պարենային հումքի մեկ տեսակից (առանց այլ բաղադրիչներ ավելացնելու),

3) սննդամթերքի, որը կազմված է մեկ բաղադրիչից, պայմանով, որ սննդամթերքի անվանմամբ հնարավոր է սահմանել այդ բաղադրիչի առկայությունը:

30. Բացառությամբ՝ սույն կանոնակարգի 36-րդ կետում նշված դեպքի՝ սննդամթերքի բաղադրիչներին չեն պատկանում և դրա բաղադրության մեջ նշելու ենթակա չեն ստորև նշվածները.

1) նյութեր, որոնք սննդամթերքի արտադրության գործընթացում հեռացվում են սննդամթերքի կազմի մեջ նշված բաղադրիչներից և արտադրության տեխնոլոգիական գործընթացի հաջորդ փուլում ավելացվում են սննդամթերքին՝ առանց այդ ելանյութերի քանակը գերազանցելու,

2) նյութեր, որոնք մտնում են մեկ կամ մի քանի բաղադրիչների կազմի մեջ և չեն փոփոխում այդպիսի բաղադրիչներ պարունակող սննդամթերքի հատկությունները,

3) տեխնոլոգիական օժանդակ միջոցներ, որոնք օգտագործվում են որոշակի սննդամթերքի արտադրության ժամանակ,

4) նյութեր, որոնք մտնում են համաբուրավետիչների կամ սննդային հավելումների կազմի մեջ՝ որպես լուծիչներ, համաբուրավետիչ նյութերի կրողներ,

31. Սննդամթերքի բաղադրության մեջ ջուրը կարող է չնշվել այն դեպքերում, եթե այն.

1) օգտագործվում է սննդամթերքի արտադրության գործընթացում՝ կոնցենտրացված, խտացված կամ չոր սննդամթերքի վերականգնման համար,

2) մտնում է սննդամթերքի բաղադրության մեջ նշված հեղուկ բաղադրիչի կազմի մեջ (այդ թվում՝ արգանակի, մարինադի, աղալուծույթի, օշարակի, աղաջրի):

32. Սննդամթերքի արտադրության գործընթացում կոնցենտրացված, խտացված կամ չոր սննդամթերքից վերականգնված բաղադրիչները թույլատրվում է նշել ըստ դրանց վերականգնումից հետո ստացվող զանգվածային մասի:

33. Համապատասխան խառնուրդների մեջ մտնող և զանգվածային մասով էականորեն չտարբերվող մրգերը (ներառյալ հատապտուղները), բանջարեղենը (ներառյալ կարտոֆիլը), ընկույզները, հացազգիները, սնկերը, համեմունքները սննդամթերքի բաղադրության մեջ կարող են նշվել ցանկացած հաջորդականությամբ՝ «փոփոխվող հարաբերակցություններով» գրառմամբ:

34.Քաղցրացնող նյութեր (շաքարային ալկոհոլներ) պարունակող սննդամթերքի մականշվածքը, սննդամթերքի բաղադրությունը նշելուց անմիջապես հետո պետք է լրացվի հետևյալ գրառմամբ. «Պարունակում է քաղցրացնող նյութ (քաղցրացնող նյութեր): Չափից ավելի օգտագործման դեպքում կարող է (կարող են) ունենալ թուլացնող ազդեցություն»:

35. Բաղադրիչները՝ (ներառյալ սննդային հավելումները, համաբուրավետիչ նյութերը), կենսաբանական ակտիվ հավելումները, որոնց օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություններ կամ հակացուցված են հիվանդությունների առանձին տեսակների դեպքում և որոնք բերված են սույն կանոնակարգի 36-րդ կետում, նշվում են սննդամթերքի բաղադրության մեջ՝ անկախ դրանց քանակից:

36. Ամենատարածված բաղադրիչների շարքին են դասվում ստորև նշվածները, որոնց օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ հակազդեցություններ կամ հակացուցված է հիվանդությունների առանձին տեսակների դեպքում.

1) գետնանուշը և դրա վերամշակումից ստացվող մթերքը,

2) ասպարտամը և ասպարտամ–կալիումի ացեսուլֆամը,

3) մանանեխը և դրա վերամշակումից ստացվող մթերքը,

4) ծծմբի երկօքսիդը և սուլֆիտները, եթե դրանց ընդհանուր պարունակությունը կազմում է 10 միլիգրամից ավելի՝ մեկ կիլոգրամին կամ 10 միլիգրամ՝ մեկ լիտրին՝ ծծմբի երկօքսիդի փոխարկելու դեպքում,

5) սնձան (սոսնձանյութ) պարունակող հացազգիները և դրանց վերամշակումից ստացվող մթերքը,

6) քնջութը և դրա վերամշակումից ստացվող մթերքը,

7) լյուպինը և դրա վերամշակումից ստացվող մթերքը,

8) կակղամորթները և դրանց վերամշակումից ստացվող մթերքը,

9) կաթը և դրա վերամշակումից ստացվող մթերքը, (այդ թվում՝ կաթնաշաքարը),

10) ընկույզները և դրանց վերամշակումից ստացվող մթերքը,

11) խեցգետնակերպերը և դրանց վերամշակումից ստացվող մթերքը,

12) ձուկը և դրա վերամշակումից ստացվող մթերքը (բացի ձկան դոնդողանյութից, որն օգտագործվում է որպես հիմնանյութ՝ վիտամիններ և կարոտինոիդներ պարունակող պատրաստուկների մեջ),

13) նեխուրը և դրա վերամշակումից ստացվող մթերքը,

14) սոյան և դրա վերամշակումից ստացվող մթերքը,

15) հավկիթները և դրանց վերամշակումից ստացվող մթերքը:

37. Սույն կանոնակարգի 36-րդ կետում սահմանված բաղադրիչների ալերգեն հատկությունների մասին տվյալները չի պահանջվում նշել սննդամթերքի մականշվածքում, բացառությամբ՝ ասպարտամի և ասպարտամ–կալիումի ացեսուլֆամի տվյալների, որոնք սննդամթերքի արտադրության ժամանակ օգտագործելու դեպքում, դրա բաղադրությունը նշելուց հետո զետեղվում է «Պարունակում է ֆենիլալանինի աղբյուր» գրառումը:

38. Հացահատիկային բաղադրիչներ պարունակող սննդամթերքի համար, մթերքի բաղադրությունը նշելուց հետո թույլատրվում է զետեղել «Չի պարունակում սնձան (սոսնձանյութ)» գրառումը, այն դեպքում, եթե օգտագործվել են սնձան (սոսնձանյութ) պարունակող հացահատիկային բաղադրիչներ կամ սնձանը (սոսնձանյութը) հեռացվել է:

39. Սույն կանոնակարգի 36-րդ կետում սահմանված բաղադրիչները, եթե չեն օգտագործվել սննդամթերքի արտադրության ժամանակ, բայց դրանց առկայությունը սննդամթերքում լիովին բացառել հնարավոր չէ, ապա այդպիսի բաղադրիչների հնարավոր առկայության մասին տեղեկությունները զետեղվում են անմիջապես սննդամթերքի բաղադրությունը նշելուց հետո:

40. Գունանյութեր պարունակող սննդամթերքի համար (ազոռուբին E122, դեղին քինոլինային E104, դեղին մայրամուտ FCF E110, կարմիր հրապուրիչ AC E129, պոնսո 4R E124 և տարտրազին E102), պետք է կատարվի նախազգուշացնող գրառում. պարունակում է գունանյութ (գունանյութեր), որը (որոնք) կարող է (կարող են) բացասական ազդեցություն ունենալ երեխաների ակտիվության և ուշադրության վրա :

Բացառություն են կազմում ալկոհոլային այն խմիչքները և սննդամթերքը, որոնց դեպքում նշված գունանյութերն օգտագործվում են սպանդային մթերքը և մսամթերքը մակնշելու կամ զատիկի համար նախատեսված հավկիթները մակնշելու կամ դեկորատիվ ներկելու համար:

VIII. ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՔԱՆԱԿԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

41. Փաթեթավորված սննդամթերքի քանակը նշվում է այդ մթերքի մականշվածքում՝ ծավալի (միլիլիտրերով, սանտիլիտրերով կամ լիտրերով), զանգվածի (գրամներով կամ կիլոգրամներով) կամ հաշվման միավորներով (հատերով): Ընդ որում, թույլատրվում է կիրառել տվյալ միավորների կրճատված անվանումները: Թույլատրվում է չնշել հատով վաճառվող հավկիթների, մրգերի, բանջարեղենի զանգվածը կամ ծավալը:

42. Փաթեթավորված սննդամթերքի քանակը նշելու համար, մեծության ընտրությունը՝ բացառությամբ հատով վաճառվող սննդամթերքի, կատարվում է՝ հաշվի առնելով ստորև նշված կանոնները, եթե սննդամթերքի առանձին տեսակների համար Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ:

- եթե սննդամթերքը հեղուկ է, ապա նշվում է դրա ծավալը,

- եթե սննդամթերքը մածուկանման է, մածուցիկ կամ թանձր (պլաստիկ) թանձրության, ապա նշվում է կամ դրա ծավալը կամ զանգվածը,

- եթե սննդամթերքը պինդ է, սորուն, պինդ և հեղուկ նյութերի խառնուրդ, ապա նշվում է դրա զանգվածը:

Կարող են միաժամանակ կիրառվել երկու մեծություններ՝ սննդամթերքի քանակը նշելու համար, օրինակ՝ զանգվածը և հատերի քանակը, զանգվածը և ծավալը:

43. Խմբային փաթեթվածքում սննդամթերքի քանակն անհրաժեշտ է նշել հետևյալ ձևով.

1. Մի քանի սպառողական փաթեթվածքներում փաթեթավորված մեկ անվանում ունեցող սննդամթերքի խմբային փաթեթվածքի վրա նշվում է մթերքի ընդհանուր քանակը և սպառողական փաթեթվածքների թիվը,

2. եթե նշված սննդամթերքի համար խմբային փաթեթվածքի հատկություններով հնարավոր է լավ տեսնել սննդամթերքի քանակի մասին տվյալները և հեշտ հաշվել սպառողական փաթեթվածքների թիվը, ապա խմբային փաթեթվածքի վրա դրանք թույլատրվում է չնշել,

3. Տարբեր տեսակներ և անվանումներ ունեցող մթերք և (կամ) տարբեր անվանումներով առանձին արտադրատեսակներ պարունակող, սպառողական մի քանի փաթեթվածքից կազմված փաթեթավորված սննդամթերքի խմբային փաթեթվածքի վրա նշվում է սպառողական

յուրաքանչյուր փաթեթվածքի մթերքի անվանումը և քանակը և (կամ) յուրաքանչյուր արտադրատեսակի անվանումը, հատերի քանակը, կամ զանգվածը:

44. Տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի քանակը նշվում է ծավալի միավորներով (միլիլիտրերով, սանտիլիտրերով կամ լիտրերով), զանգվածի միավորներով (գրամներով կամ կիլոգրամներով) կամ տրանսպորտային փաթեթվածքում եղած փաթեթավորման միավորների քանակով (հատերով)՝ նշելով փաթեթավորման յուրաքանչյուր միավորի մեջ տեղադրված սննդամթերքի քանակը: Ընդ որում, թույլատրվում է կիրառել տվյալ միավորների կրճատված անվանումները:

45. Հեղուկ միջավայրում տեղադրված սննդամթերքի դեպքում (օրինակ՝ ջրում, շաքարի ջրային լուծույթներում, սննդային թթուների ջրային լուծույթներում, աղի ջրային լուծույթներում, աղալուծույթներում, քացախում, մրգային կամ բանջարեղենային հյութերում), սննդամթերքի ծավալը կամ զանգվածը հեղուկ միջավայրի հետ միասին նշելուց բացի, պետք է լրացուցիչ նշվի հեղուկ միջավայրում տեղադրված սննդամթերքի ծավալը կամ զանգվածը: Տվյալ պահանջը տարածվում է նաև հեղուկ միջավայրում տեղադրված՝ հետագա սառեցման համար նախատեսվող սննդամթերքի վրա:

46. Չի թույլատրվում կատարել փաթեթավորված սննդամթերքի քանակի և փաթեթավորված սննդամթերքի քանակի թվային տիրույթի վերաբերյալ անորոշ նշում:

IX. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

47. Սննդամթերքի մականշվածքում դրա պատրաստման ամսաթվի նշումը՝ պիտանիության ժամկետից կախված, կատարվում է հետևյալ բառերի կիրառմամբ.

1) «պատրաստման ամսաթիվը»՝ նշելով ժամը, օրը, ամիսը՝ մինչև 72 ժամ պիտանիության ժամկետի դեպքում,

2) «պատրաստման ամսաթիվը»՝ նշելով օրը, ամիսը, տարին՝ 72 ժամից մինչև երեք ամիս պիտանիության ժամկետի դեպքում,

3) «պատրաստման ամսաթիվը»՝ նշելով ամիսը, տարին կամ օրը, ամիսը, տարին՝ երեք ամիս և ավելի պիտանիության ժամկետի դեպքում,

4) «պատրաստման տարին»՝ շաքարի համար:

48. «Պատրաստման ամսաթիվը» բառերից հետո նշվում է սննդամթերքի պատրաստման ժամկետը կամ սպառողական փաթեթվածքի վրա այդ ամսաթիվը նշելու տեղը:

49. Սննդամթերքի մականշվածքում «պատրաստման ամսաթիվը» բառերը կարող են փոխարինվել «արտադրման ամսաթիվը» կամ իմաստով համանման բառերով:

50. Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում սննդամթերքի առանձին տեսակների համար «պատրաստման ամսաթիվը» բառերի փոխարեն կարող են սահմանվել այլ հասկացություններ, որոնցով որոշվում է սննդամթերքի առանձին տեսակների արտադրության տեխնոլոգիական գործընթացի ավարտի ամսաթիվը, օրինակ՝ խմիչքների շշալցման ամսաթիվը, հավկիթների տեսակավորման ամսաթիվը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի տարին, վայրի աճող մրգերի, ընկույզների, մեղվաբուծական մթերքի հավաքի տարին:

Սննդամթերքի պատրաստման ամսաթիվը նշելու համար ներկայացվող, սույն կանոնակարգի պահանջներին չհակասող, լրացուցիչ պահանջները կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

X. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

51. Սննդամթերքի մականշվածքում դրա պիտանիության ժամկետի նշումը կատարվում է հետևյալ բառերի կիրառմամբ.

1) «պիտանի է մինչև»՝ նշելով ժամը, օրը, ամիսը՝ դրա մինչև 72 ժամ պիտանիության ժամկետի դեպքում,

2) «պիտանի է մինչև»՝ նշելով օրը, ամիսը, տարին՝ դրա 72 ժամից մինչև երեք ամիս պիտանիության ժամկետի դեպքում,

3) «պիտանի է մինչև... ավարտը»՝ նշելով ամիսը, տարին կամ «պիտանի է մինչև»՝ նշելով օրը, ամիսը, տարին՝ դրա երեք ամսից ոչ պակաս պիտանիության ժամկետ ունենալու դեպքում:

52. Սննդամթերքի պիտանիության ժամկետը նշելու նպատակով կարող է կիրառվել «պիտանի է» բառը՝ նշելով օրերի (24 ժամվա), ամիսների կամ տարիների քանակը կամ մինչև 72 ժամ պիտանիության ժամկետի դեպքում՝ «պիտանի է» բառը՝ նշելով ժամերի քանակը:

53. «Պիտանի է մինչև», «պիտանի է», «պիտանի է մինչև... ավարտը» բառերից հետո նշվում է կամ սննդամթերքի պիտանիության ժամկետը, կամ փաթեթվածքի վրա այդ ժամկետը զետեղելու տեղը:

54. Արտադրողի կողմից սննդամթերքի մականշվածքի համար պիտանիության անսահմանափակ ժամկետ սահմանվելու դեպքում, պետք է լրացվի «Պիտանիության ժամկետը սահմանափակված չէ՝ պահպանման պայմաններին հետևելու դեպքում» գրառմամբ:

55. Սննդամթերքի մականշվածքում «պիտանի է մինչև», «պիտանի է», «պիտանի է մինչև... ավարտը» բառերը կարող են փոխարինվել «պիտանիության ժամկետ», «օգտագործել մինչև» կամ իմաստով համանման բառերով:

56. Սննդամթերքի պիտանիության ժամկետը նշելու համար ներկայացվող, սույն կանոնակարգի պահանջներին չհակասող լրացուցիչ պահանջները կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

XI. ՍՆՆԴԱՄԹԵՐՔՆ ԱՐՏԱԴՐՈՂԻ, ԱՐՏԱԴՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ, ՆԵՐՄՈՒԾՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄՆ ՈՒ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

57. Սննդամթերք արտադրողի անվանումը և գտնվելու վայրը նշվում է ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված, այնպես էլ՝ երրորդ երկրներից մատակարարված սննդամթերքի մականշվածքում: Սննդամթերք արտադրողի գտնվելու վայրը որոշվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վայրով:

58. Սպառողին (ձեռք բերողին) տրամադրվող տեղեկություններում անհրաժեշտ է կիրառել արտադրողի պաշտոնապես գրանցված անվանումը և գտնվելու վայրը (հասցեն, այդ թվում՝ երկիրը): Արտադրողի հասցեն չհամընկնելու դեպքում, նշվում է նաև արտադրության (արտադրությունների) և այն անձի հասցեն (հասցեները), որին արտադրողը լիազորել է սպառողներից (ձեռք բերողներից) իր տարածքում ներկայացվող պահանջներն ընդունելու համար (եթե կան այդպիսիք):

59. Երրորդ երկրներից մատակարարվող սննդամթերքն արտադրողի գտնվելու վայրի անվանման մասին տեղեկությունները թույլատրվում է նշել լատիներեն այբուբենի տառերով և

արաբական թվերով կամ սննդամթերքն արտադրողի գտնվելու վայրի երկրի պետական լեզվով (լեզուներով)՝ երկրի անվանումը հայերեն նշելու պայմանով:

60. Սննդամթերքի մականշվածքում, որի արտադրությունն իրականացնում են մի քանի արտադրողներ, կարող է նշվել յուրաքանչյուր արտադրողի անվանումն ու գտնվելու վայրը՝ պայմանով, որ սպառողներին (ձեռք բերողներին) յուրաքանչյուր արտադրողի մասին իրազեկելու եղանակը, օրինակ՝ տառերի, թվերի, խորհրդանիշերի կիրառումը, այլ տառատեսակով առանձնացնելը լինի այնպիսին, որ թույլ տա միանշանակ որոշել կոնկրետ սննդամթերք արտադրողին:

61. Արտադրման վայրում չփաթեթավորված մթերքը (բացառությամբ դեպքերի, երբ մանրածախ առևտրով զբաղվող կազմակերպությունները սննդամթերքը տեղավորում են սպառողական փաթեթվածքում) պետք է ներառի սույն կանոնակարգի 57-րդ կետով նախատեսված տեղեկություններ՝ արտադրողի և իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին, որոնք սննդամթերքի փաթեթավորումն իրականացնում են ոչ դրա արտադրման վայրում՝ հետագա իրացման համար կամ այլ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պատվերով:

62. Եթե արտադրողն ունի իր կողմից լիազորված անձ, ապա արտադրողի կողմից լիազորված այդ անձի անվանումը և գտնվելու վայրը պետք է նշվի սննդամթերքի մականշվածքում:

63. Երրորդ երկրներից մատակարարվող սննդամթերքի մականշվածքում նշվում են ներմուծողի անվանումը և գտնվելու վայրը:

XII. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՍՆՆԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

64. Մականշվածքում նշվող սննդամթերքի սննդային արժեքը ներառում է հետևյալ ցուցիչները՝

1) էներգետիկ արժեքը (կալորիականությունը),

2) սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քանակությունը,

3) վիտամինների և հանքային նյութերի քանակությունը:

65. Բուրավետիչների, մաստակի, սուրճի, բնական հանքային ջրի, շշալցված խմելու ջրի, սննդային հավելումների, հում սննդամթերքի (սնկի, մթերատու կենդանիների և թռչնի, ձկան

սպանդից ստացված մթերքի, բանջարեղենի (այդ թվում՝ կարտոֆիլի), մրգերի (այդ թվում՝ հատապտուղների), կերակրի աղի, համեմունքային կանաչեղենի, համեմունքների, քացախի, թեյի սննդային արժեքը կարող է չնշվել, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով՝ տվյալ տեսակի սննդամթերքի համար: Սննդամթերքի այլ տեսակների սննդային արժեքը կարող է չնշվել այն դեպքերում, երբ դրանք նախատեսված են Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

66. Սննդամթերքի սննդային արժեքը պետք է ներկայացվի սննդամթերքի 100 գրամի կամ 100 միլիլիտրի և (կամ) մեկ բաժնի համար (սննդամթերքի սահմանված քանակություն, որը նշված է մականշվածքի վրա՝ որպես մեկ բաժին, որի դեպքում այդ բաժնի քանակությունը պարտադիր նշվում է):

67. Սննդամթերքի էներգետիկ արժեքը (կալորիականությունը) պետք է նշվի ջոուլով կամ կալորիայով կամ նշված մեծությունների բազմապատիկով կամ բաժանարարով արտահայտված միավորներով:

68. Սննդային նյութերի, այդ թվում՝ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քանակությունը պետք է նշվի գրամով կամ նշված մեծության բազմապատիկով կամ բաժանարարով արտահայտված միավորներով:

69. Սննդամթերքում վիտամինների և հանքային նյութերի քանակությունը պետք է նշվի Միավորների միջազգային համակարգում (ՄՀ) նշված մեծությունների միավորներով (միլիգրամներով կամ միկրոգրամներով) կամ այլ մեծությունների միավորներով, որոնք ընդունելի են Հայաստանի Հանրապետությունում ընդունված չափման միավորների համակարգին:

70. Սննդամթերքի սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քանակությունը և էներգետիկ արժեքը (կալորիականությունը) պետք է նշվի այն սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և էներգետիկ արժեքի (կալորիականության) նկատմամբ, որոնց դեպքում սննդամթերքի 100 գրամում կամ 100 միլիլիտրում կամ մեկ բաժնում (եթե սննդային արժեքը հաշվարկված է մեկ բաժնի համար) քանակությունը կազմում է չափահաս մարդու կողմից սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և էներգիայի օրական միջին պահանջի 2 և ավելի տոկոսը: Այլ դեպքերում, սննդամթերքի սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և էներգետիկ արժեքի (կալորիականության) քանակությունը կարող է նշվել արտադրողի հայեցողությամբ:

71. Սննդամթերքում վիտամինների և հանքային նյութերի քանակությունը պետք է նշվի, եթե վիտամինները և հանքային նյութերը ավելացվել են սննդամթերքում դրա արտադրության

ժամանակ: Այլ դեպքերում վիտամինների և հանքային նյութերի քանակությունը սննդամթերքում կարող է նշվել այն վիտամինների և հանքային նյութերի նկատմամբ, որոնց դեպքում սննդամթերքի 100 գրամում կամ 100 միլիլիտրում կամ մեկ բաժնում (եթե սննդային արժեքը հաշվարկված է մեկ բաժնի համար) քանակությունը կազմում է չափահաս մարդու կողմից վիտամինների և հանքային նյութերի միջին օրական պահանջի 5 և ավելի տոկոսը:

72. Չափահաս մարդու կողմից սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և էներգիայի, վիտամինների, հանքային և այլ նյութերի միջին օրական պահանջն արտահայտող մեծությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության սույն կանոնակարգի 2-րդ հավելվածի համաձայն:

Սննդամթերքի մականշվածքի վրա սույն կանոնակարգի 70-րդ, 71-րդ, 72-րդ կետերում նշված և սպառողների առանձին կատեգորիաների համար նախատեսված սննդային արժեքի ցուցիչները նշելու համար, հաշվարկը կատարվում է սպառողների այդ կատեգորիայի միջին օրական պահանջի հաշվարկով:

73. Սննդի մեջ կենսաբանական ակտիվ հավելումների համար՝ այն նյութերի նկատմամբ, որոնց աղբյուրը տվյալ կենսաբանական ակտիվ հավելումներն են, իսկ հարստացված սննդամթերքի համար՝ այն նյութերի նկատմամբ, որոնք օգտագործվում են այդ սննդամթերքի հարստացման համար, լրացուցիչ կերպով պետք է տոկոսային հարաբերակցությամբ նշվի սննդային արժեքն այն մեծությունների նկատմամբ, որոնք սահմանված են սույն կանոնակարգի 72-րդ կետով:

74. Սպառողի կողմից պատրաստման ենթակա սննդամթերքի սննդային արժեքի ցուցիչների արժեքը նշվում է մականշվածքի վրա՝ հաշվի չառնելով այդ սննդամթերքի հետագա պատրաստումը:

75. Սննդամթերքի սննդային արժեքի ցուցիչների արժեքը սահմանվում է սննդամթերք արտադրողի կողմից՝ վերլուծական կամ հաշվարկային եղանակով:

76. Սննդամթերքի էներգետիկ արժեքը (կալորիականությունը) և դրանում սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի բաղադրությունը նշելիս կարող է կիրառվել սննդամթերքի սննդային արժեքի ցուցիչների արժեքի կլորացման կանոնը՝ Հայաստանի Հանրապետության սույն կանոնակարգի 4-րդ հավելվածի համաձայն, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով՝ առանձին տեսակի սննդամթերքի համար:

77. Սննդամթերքի սննդային արժեքի ցուցանիշների նկատմամբ մականշվածքի վրա կարող է նշվել՝ «Միջին արժեքները»: Սննդամթերքի էներգետիկ արժեքը (կալորիականությունը) որոշելիս՝ պետք է կիրառվեն սննդամթերքի հիմնական սննդանյութերը էներգետիկ արժեքի (կալորիականության) փոխարկելու գործակիցները՝ Հայաստանի Հանրապետության սույն կանոնակարգի 5-րդ հավելվածի համաձայն:

78. Սննդամթերքում ածխաջրերի պարունակությունը որոշելիս՝ հաշվի է առնվում մարդու օրգանիզմում նյութափոխանակությանը մասնակցող քանակությունը սննդամթերքում (բացառությամբ սննդային մանրաթելի), ինչպես նաև քաղցրացնող նյութերի՝ շաքարային ալկոհոլի քանակությունը:

79. Ա վիտամինի և Ա նախավիտամինի քանակությունը որոշելիս, կիրառվում է փոխակերպման գործակից այն հաշվարկով, որ մեկ միկրոգրամ ռետիոնոլին կամ ռետինոլի համարժեք նյութին համապատասխանում է վեց միկրոգրամ բետա կարոտին:

80. Սննդամթերքի սննդային արժեքին ներկայացվող լրացուցիչ պահանջները, որոնք չեն հակասում Հայաստանի Հանրապետության սույն կանոնակարգի պահանջներին, կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերում՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

XIII. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

81. Սննդամթերքի առանձին հատկանիշների մասին տեղեկությունները մակնշման ժամանակ նշվում է կամավոր հիմունքներով:

82. Սննդամթերքի առանձին առանձնահատկությունների մասին տեղեկությունները, այդ թվում՝ սննդամթերքում ԳՁՕ–ներից (կամ) ԳՁՕ–ների կիրառությամբ ստացված բաղադրիչների բացակայության մասին տեղեկությունները պետք է հաստատվեն ապացույցներով, որոնք ինքնուրույն կամ այլ անձանց միջոցով ստացված տեղեկությունների հիման վրա ներկայացված է սննդամթերքի մականշվածքի վրա՝ նման հայտարարություն կատարող անձի կողմից: Սննդամթերքի առանձին առանձնահատկությունների առկայության ապացույցները պետք է պահվեն կազմակերպություններում կամ անհատ ձեռնարկատերերի մոտ, որոնք շրջանառության մեջ են դնում նման սննդամթերքը Հայաստանի Հանրապետության տարածքում և պետք է ներկայացվեն այն դեպքերում, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ:

83. Սույն կանոնակարգի 6-րդ հավելվածում նշված սննդամթերքի առանձին առանձնահատկությունների մասին տեղեկությունները կարող են օգտագործվել միայն այդ հավելվածում նշված պայմանների պահպանման դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով՝ սննդամթերքի առանձին տեսակների համար: Սույն կանոնակարգի 6-րդ հավելվածում չնշված՝ սննդամթերքի առանձին առանձնահատկությունների մասին տեղեկությունները կարող են օգտագործվել սննդամթերքի մականշվածքում, եթե բավարարված են սույն կանոնակարգի 82-րդ կետի պահանջները կամ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով հաստատված պահանջները՝ սննդամթերքի առանձին տեսակների համար:

84. Սննդային արժեքի մասով սննդամթերքի առանձին առանձնահատկությունների մասին տեղեկություններին կից, սննդամթերքի մականշվածքի վրա պետք է նշվի սննդային համապատասխան նյութերի քանակությունը, որով սահմանվում է սննդամթերքի սննդային արժեքը:

XIV. ՍՆՆԴԱՄԹԵՐՔՈՒՄ՝ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՄԱԿԱՆՇՎԱԾՔՈՒՄ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

85. ԳՁՕ–ների կիրառությամբ ստացված սննդամթերքի, այդ թվում՝ դեզօքսիռիբոնուկլեինաթթու և սպիտակուց չպարունակող սննդամթերքի համար, պետք է նշվի հետևյալ տեղեկությունները՝ «գենետիկորեն ձևափոխված արտադրանք» կամ «գենո–ձևափոխված օրգանիզմներից ստացված արտադրանք» կամ «արտադրանքը ներառում է գենո–ձևափոխված օրգանիզմներից բաղադրիչներ»:

Սննդամթերք արտադրելիս արտադրողի կողմից գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ չօգտագործելու դեպքում, սննդամթերքում 0,9 տոկոս և պակաս քանակությամբ ԳՁՕ–ն համարվում է պատահական կամ տեխնիկապես անհնար վերացվող խառնուրդ, և նման սննդամթերքը չի համարվում ԳՁՕ պարունակող սննդամթերք: Նման սննդամթերքի մականշվածքի ժամանակ ԳՁՕ–ի առկայության մասին տեղեկություններ չեն նշվում:

86. Գենետիկորեն ձևափոխված միկրոօրգանիզմներից (մանրէներից, խմորիչներից և միցելային սնկերից, որոնց գենետիկ նյութը փոփոխված է գենային ինժեներիայի մեթոդի կիրառությամբ) (այսուհետ՝ ԳՁՄ) կամ այդ միկրոօրգանիզմների օգտագործմամբ ստացված

սննդամթերքի դեպքում, պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

– կենդանի ԳՁՄ–ի պարունակության դեպքում՝ «Արտադրանքը ներառում է կենդանի գենո–ձևափոխված միկրոօրգանիզմներ»,

– անկենսունակ ԳՁՄ–ի պարունակության դեպքում՝ «Արտադրանքը ստացվել է գենո–ձևափոխված միկրոօրգանիզմների կիրառությամբ»,

– տեխնոլոգիական ԳՁՄ–ներից մաքրված կամ ԳՁՄ–ներից մաքրված բաղադրիչների կիրառության դեպքում՝ «Արտադրանքը ներառում է բաղադրիչներ, որոնք ստացվել են գենո–ձևափոխված միկրոօրգանիզմների կիրառությամբ»:

Սննդամթերքի մականշվածքում ԳՁՕ–ների առկայության մասին տեղեկություններ չեն նշվում տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառության առնչությամբ, որոնք արտադրված են ԳՁՕ–ներից կամ դրանց օգտագործմամբ:

XV. ՄԱԿԱՆՇՎԱԾՔԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

87. Սույն կանոնակարգի 7-րդ և 12-րդ կետերում նախատեսված սննդամթերքի մականշվածքը պետք է լինի պարզ, տրամաբանական, հավաստի և սպառողների (ձեռք բերողների) մոտ մոլորություն չառաջացնող, միևնույն դեպքում նշումները, նշանները, խորհրդանիշները պետք է լինեն կոնտրաստային ֆոնի վրա, որի վրա զետեղված է մականշվածքը: Մականշվածքի զետեղման եղանակը պետք է ապահովի սննդամթերքի պիտանիության ամբողջ ժամկետում դրա պահպանությունը՝ արտադրողի կողմից սահմանված պահպանման պայմանների բավարարման պայմաններում:

88. Սույն կանոնակարգի 35-րդ կետում և 7-րդ կետի 1, 4-6 ենթակետերով նախատեսված տեղեկությունները պետք է զետեղվեն սպառողական փաթեթվածքի և (կամ) պիտակի վրա, որի հեռացումը սպառողական փաթեթվածքից պետք է դժվար լինի:

89. Սույն կանոնակարգի 7-րդ կետի 2, 3, 7-11 ենթակետերով նախատեսված տեղեկությունները պետք է նշվեն սպառողական փաթեթվածքի և (կամ) պիտակի, և (կամ) թերթ–ներդրակի վրա, և (կամ) յուրաքանչյուր փաթեթավորման միավորում տեղադրված կամ յուրաքանչյուր փաթեթավորման միավորի վրա փակցված թերթ–ներդրակի վրա:

90. Սննդամթերքի սպառողական փաթեթվածքի մեծ կողմի տարածքը 10 քառակուսի

սանտիմետրը չգերազանցելու դեպքում, 23-րդ կետով նախատեսված տեղեկությունները (բացառությամբ՝ VII-րդ բաժնի 35-րդ կետով նախատեսված տեղեկությունների) և սույն կանոնակարգի 7-րդ կետի 3, 7-11 ենթակետերով նախատեսված տեղեկությունները պետք է նշվեն սպառողական փաթեթվածքի վրա և (կամ) պիտակի վրա, և (կամ) յուրաքանչյուր փաթեթավորման միավորում կամ յուրաքանչյուր տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված թերթ–ներդրակի վրա, կամ յուրաքանչյուր փաթեթավորման միավորի կամ տրանսպորտային փաթեթվածքի վրա փակցված թերթ–ներդրակի վրա:

91. Մանրածախ առևտրի կազմակերպությունների կողմից սպառողի բացակայության պայմաններում սննդամթերքի նախնական փաթեթավորման դեպքում, սպառողական փաթեթվածքի կամ այդ փաթեթվածքի պիտակի վրա պետք է նշվի սննդամթերքի անվանումը, դրա պատրաստման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և պահպանման պայմանները: Սույն կանոնակարգի 35-րդ և 7-րդ կետերում նախատեսված այլ տեղեկություններն սպառողին հասցվում են ցանկացած եղանակով, որով սպառողը կկարողանա կատարել այդ սննդամթերքի հիմնավորված ընտրություն (այդ թվում՝ տեղեկություններ նշելով սպառողական փաթեթվածքի վրա և (կամ) պիտակի վրա, և (կամ) թերթ–ներդրակի վրա, որը տեղադրված է յուրաքանչյուր փաթեթավորման միավորի մեջ կամ փակցված է յուրաքանչյուր փաթեթավորման միավորին):

92. Անմիջականորեն տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքին առնչվող, ինչպես նաև մանրածախ առևտրի կազմակերպությունների կողմից սպառողի ներկայությամբ սննդամթերքի նախնական փաթեթավորման ենթարկվող սննդամթերքին առնչվող՝ սույն կանոնակարգի 35-րդ և 7-րդ կետերում նախատեսված տեղեկություններն սպառողին հասցվում են ցանկացած եղանակով, որով սպառողը կկարողանա կատարել այդ սննդամթերքի հիմնավորված ընտրություն:

93. Սույն կանոնակարգի V-րդ բաժնում նախատեսված տրանսպորտային փաթեթվածքում անմիջականորեն տեղադրված սննդամթերքի մականշվածքը պետք է զետեղվի տրանսպորտային փաթեթվածքի և (կամ) պիտակի վրա, և (կամ) յուրաքանչյուր տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված թերթ–ներդրակի, կամ տրանսպորտային փաթեթվածքի վրա փակցված թերթ–ներդրակի վրա, կամ պետք է նշվի սննդամթերքին կից փաստաթղթերում:

94. Սննդամթերքի մականշվածքը չպետք է պարունակի սննդամթերքի նկար, որը նշված չէ սպառողական փաթեթվածքում, կամ չի օգտագործվել սննդամթերքի կամ սպառողական փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի բաղադրիչների արտադրության ժամանակ, կամ որի համը և (կամ) բույրը նման չէ սպառողական փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի

կազմում առկա բաղադրիչների համին կամ բույրին՝ բացառությամբ սույն կանոնակարգի 95-րդ կետում նախատեսված դեպքերի:

95. Սննդամթերքի մականշվածքը, որը ներկայացված է ճաշատեսակի տեսքով, որի պատրաստման ընթացքում կիրառվում է տվյալ սննդամթերքը, պետք է ուղեկցվի հետևյալ բառերով՝ «ճաշատեսակի պատրաստման եղանակ» կամ համանման բառերով:

XVI. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ԴՐԱ ՄԱԿՆՇՄԱՆ ՄԱՍՈՎ

96. Սննդամթերքի մականշվածքի համապատասխանեցումը սույն կանոնակարգին ապահովվում է անմիջականորեն մականշվածքի պահանջների կատարմամբ և սննդամթերքի մականշվածքի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանող Հայաստանի Հանրապետությունում գործող սննդամթերքի առանձին տեսակների համար տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության 11.06.2009թ. N 662-Ն որոշում):

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության կառավարության
2014թ. .....N.....-Ն որոշման

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ՓՈԽԱՐԻՆԵԼ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՈՎ

Բաղադրիչների տեսակները	Սննդամթերքի տեսակների անվանումները
1	2
Ռաֆինացված յուղեր կամ ճարպեր	Ծագման նշումով յուղեր կամ ճարպեր՝ բուսական կամ կենդանական
Ճնշման տակ քամված, լուծամզված և ռաֆինացված կակաոյի յուղ	Կակաոյի յուղ
Մրգերի խառնուրդներ, որոնց զանգվածային մասը կազմում է սննդամթերքի 10 տոկոսից ոչ ավելին	Մրգեր
Հատապտուղների խառնուրդներ, որոնք կազմում են սննդամթերքի զանգվածային մասի 10 տոկոսից ոչ ավելին	Հատապտուղներ
Շաքարապատված մրգեր, որոնք կազմում են սննդամթերքի զանգվածային մասի 10 տոկոսից ոչ ավելին	Շաքարածո մրգեր
Բանջարեղենների խառնուրդներ, որոնք կազմում են սննդամթերքի զանգվածային մասի 10 տոկոսից ոչ ավելին	Բանջարեղեններ
Ցանկացած տեսակի բնական մեղր	Մեղր
Երկու և ավելի տեսակի ցորենի ալյուրի խառնուրդներ	Ալյուր, որի վրա նշված է արտադրման ցորենի տեսակը՝ դրանց զանգվածային մասի նվազման կարգով
Օսլաներ և ֆիզիկական միջոցներով կամ ֆերմենտներով ձևափոխված (մոդիֆիկացված) օսլաներ	Օսլաներ*
Բոլոր տեսակների ձկներ	Ձուկ
Կերակրի աղ (նատրիումի քլորիդ)	Աղ
Պանիր և պանրի խառնուրդ	Պանիր
Կաթնային սպիտակուց, կազեին, կազեինատ, շիճուկի սպիտակուց և դրանց խառնուրդները	Կաթնային սպիտակուց
Համեմունքներ, որոնք կազմում են սննդամթերքի զանգվածային մասի 2 տոկոսից ոչ ավելին	Համեմունքներ կամ համեմունքների խառնուրդներ
Համեմունքային կանաչեղեն, որոնք կազմում են սննդամթերքի զանգվածային մասի 2 տոկոսից ոչ ավելին	Համեմունքային կանաչեղեն կամ դրանց խառնուրդները
Նախանյութեր, որոնք օգտագործվում են մաստակ արտադրելու համար	Ռետինային հիմք

Բոլոր տեսակների սախարոզաներ	Շաքար
Անջուր կամ մոնոհիդրատային գլյուկոզա	Գլյուկոզա
Բոլոր տեսակների մրգահյութեր	Մրգահյութից կամ գլյուկոզայից անուշահյութ
Խաղողի գինիներ	Գինի
Բոլոր տեսակների ձավարեղեն	Ձավարեղեն
Սոյայի սպիտակուց (իզոլյատներ, խտանյութեր)	Սոյայի սպիտակուց
Ձվամթերք բոլոր տեսակի	Ձվամթերք
* Լրացուցիչ նշվում է ծագումը, օրինակ՝ կարտոֆիլի	

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարության
2014թ. .....N.....-Ն որոշման

ՀԻՄՆԱԿԱՆ ՍՆՆԴԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ՝ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՀԱՄԱՐ

Հիմնական սննդանյութերը	Օրական սպառման առաջարկվող մակարդակը
Էներգետիկ արժեք (կալորիականություն), կջոուլ/կկալ*	10 467/2 500
Սպիտակուցներ, գրամ	75
Ճարպեր, գրամ այդ թվում՝ պոլիչհագեցված ճարպաթթուներ, գրամ	83 11
Դյուրամարս ածխաջրեր, գրամ այդ թվում՝ շաքար (սախարոզա), գրամ	365 65
Սննդային մանրաթել, գրամ	30
Հանքային նյութեր՝	
Կալցիում, մգ	1000
Ֆոսֆոր, մգ	800
Երկաթ, մգ	14
Մագնիում, մգ	400
Ցինկ, մգ	15
Յոդ, մկգ	150
Կալիում, մգ	3,500
Սելեն, մգ	0,07
Վիտամիններ	
Վիտամին A, մկգ	800
Վիտամին D, մկգ	5**
Վիտամին E, մգ	10
Վիտամին C, մգ	60
Թիամին	1.4
Ռիբոֆլավին, մգ	1.6
Նիացին	18
Վիտամին B6, մգ	2
Ֆոլացին, մկգ	200
Վիտամին B12, մկգ	1
Բիոտին, մգ	0.05
Պանտոտենային թթու, մգ	6

* Փոխարկելու նպատակով ջոուլով էներգետիկ արժեքը նշելու համար կիրառվում է 1 կալորիան հավասար է 4,1868 ջոուլ (ստույգ) հարաբերակցությունը:
** 5 մկգ քոլեկալցիֆերոլ – 200 ՄՄ վիտամին D:

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության կառավարության
2014թ. .....N.....-Ն որոշման

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԺԵՔԻ ԿԼՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔՈՒՄ ՍՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ, ՃԱՐՊԵՐԻ ԵՎ ԱԾԽԱՋՐԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԼՈՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԺԵՔԻ ԿԼՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Աղյուսակ 1

Էներգետիկ արժեք (կալորիականություն), կջոուլ/կկալ	Կլորացման կանոնները կամ ցուցումները
1-ից պակաս	Նշվում է՝ « 1»
1-ից 5-ը՝ ներառյալ	մինչև մոտակա ամբողջ թիվը
5-ից 100-ը՝ ներառյալ	մինչև մոտակա ամբողջ թիվը՝ 5-ի բազմապատիկը
100-ից ավելի	մինչև մոտակա ամբողջ թիվը՝ 10-ի բազմապատիկը

ՍՆՆԴԱՄԹԵՐՔՈՒՄ ՍՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ, ՃԱՐՊԵՐԻ, ԱԾԽԱՋՐԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԼՈՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Աղյուսակ 2

Սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քանակությունները, գրամ	Կլորացման կանոնները կամ ցուցումները
0.5-ից պակաս	Նշվում է մինչև առաջին տասնորդական նշանի արժեքը՝ ստորակետից հետո
0,5-ից 10-ը՝ ներառյալ	Մինչև մոտակա արժեքը, 0,5 –ի բազմապատիկը (գրամ)
10-ից ավելի	Մինչև մոտակա կլոր թիվը՝ 1-ի բազմապատիկը (գրամ)

Հավելված N 5
Հայաստանի Հանրապետության կառավարության
2014թ. .....N.....-Ն որոշման

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՆՆԴԱՆՅՈՒԹԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

1. Էներգետիկ արժեքը, որը պետք է նշվի, հաշվարկվում է՝ օգտագործելով հետևյալ փոխարկման գործակիցները՝

Սննդամթերքի հիմնական սննդանյութերը	Փոխարկման գործակիցները
Սպիտակուցներ	4 կկալ/գ – 17 կջոուլ/գ
Ածխաջրեր, այդ թվում՝ մոնո– և երկշաքարներ (բացառությամբ շաքարային ալկոհոլի)	4 կկալ/գ – 17 կջոուլ/գ
Շաքարային ալկոհոլներ (բացառությամբ էրիթրիտի)	2.4 կկալ/գ – 10 կջոուլ/գ
Էրիթրիտ	0
Ճարպեր, ճարպաթթուներ	9 կկալ/գ – 37 կջոուլ/գ
Օրգանական թթուներ	3 կկալ/գ – 13 կջոուլ/գ
Սալատրիմ	6 կկալ/գ – 25 կջոուլ/գ
Էթանոլ	7 կկալ/գ – 29 կջոուլ/գ
Սննդային մանրաթել	2 կկալ/գ – 8 կջոուլ/գ

Հավելված N 6
Հայաստանի Հանրապետության կառավարության
2014թ. .....N.....-Ն որոշման

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սննդային արժեքի ցուցիչ կամ բաղադրիչ	Սննդամթերքի տարբերակիչ հատկանիշների մասին տեղեկություններ	Պայմաններ, որոնց պահպանումը պարտադիր է սննդամթերքի տարբերակիչ հատկանիշների մասին տեղեկությունները սննդամթերքի մականշվածքում կիրառելու դեպքում
1	2	3
Էներգետիկ արժեքը (կալորիականությունը)	Նվազեցված	Էներգետիկ արժեքը (կալորիականությունը) նվազեցված է նույնանման սննդամթերքի Էներգետիկ արժեքի (կալորիականության) համեմատությամբ՝ 30 տոկոսից ոչ պակաս չափով
Էներգետիկ արժեքը (կալորիականությունը)	Ցածր	Էներգետիկ արժեքը (կալորիականությունը) կազմում է կոշտ սննդամթերքի 100 գրամի համար 40 կիլոկալորիայից ոչ ավելի (170 կջոուլ), կամ հեղուկների դեպքում՝ 100 մլ համար 20 կիլո կալորիայից ոչ ավելի (80 կջոուլ): Շաքարի փոխարինիչների դեպքում, որոնք անմիջականորեն օգտագործվում են սննդի մեջ, էներգետիկ արժեքը (կալորիականությունը) կազմում է 4 կիլոկալորիայից ոչ ավելի (17 կջոուլ)/ 1 բաժնի համար, որն ունի 6 գ սախարոզային համարժեք քաղցրացնող հատկանիշներ
Էներգետիկ արժեքը (կալորիականությունը)	Չկա	Էներգետիկ արժեքը (կալորիականությունը) կազմում է 4 կիլոկալորիայից ոչ ավելի (17 կջոուլ)՝ 100 մլ–ի համար: Շաքարի փոխարինիչների դեպքում, որոնք անմիջականորեն օգտագործվում են սննդի մեջ, էներգետիկ արժեքը (կալորիականությունը) կազմում է 0.4 կիլոկալորիայից ոչ ավելի (1.7 կջոուլ)/՝ 1 բաժնի համար, որն ունի 6 գ սախարոզային համարժեք քաղցրացնող հատկանիշներ
Սպիտակուց	Աղբյուրը	Սպիտակուցո ապահովում է սննդամթերքի էներգետիկ արժեքի (կալորիականության) 12 տոկոսից ոչ պակաս քանակությունը՝ պայմանով, որ կոշտ սննդի 100 գրամի համար կամ 100 մլ հեղուկի համար սպիտակուցի քանակությունը կազմի սպիտակուցի օրական պահանջարկի 5 տոկոսից ոչ պակասը
Սպիտակուց	Բարձր պարունակություն	Սպիտակուցն ապահովում է սննդամթերքի էներգետիկ արժեքի (կալորիականության) 20%–ից ոչ պակասը
Ճարպ	Ցածր պարունակություն	Ճարպը կազմում է 3 գրամից ոչ ավելի՝ 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 1,5 գրամից ոչ ավելի՝ 100 մլ հեղուկ սննդամթերքում
Ճարպ	Չկա	Ճարպը կազմում է 0,5 գրամից ոչ ավելի՝ 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում
Հագեցած	Ցածր	Հագեցած ճարպաթթուների և տրանս ճարպաթթուների

ճարպաթթուներ	պարունակություն	ընդհանուր քանակությունը 100 գրամ կոշտ սննդամթերքում կազմում է 1,5 գրամից ոչ ավելին կամ 0,75գրամ/100 մլ՝ հեղուկում, և ցանկացած դեպքում հագեցած ճարպաթթուների և տրանս ճարպաթթուների ընդհանուր քանակությունը պետք է լինի կալորիականության 10%-ից ոչ ավելի
Հագեցած ճարպաթթուներ	Չկա	Հագեցած ճարպաթթուների և տրանս ճարպաթթուների ընդհանուր քանակությունը 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում կազմում է 0,1 գրամից ոչ ավելի
Շաքար (մոնո- և երկսախարիդների ընդհանուր քանակությունը)	Չկա	Շաքարը կազմում է 0.5 գրամից ոչ ավելի 100 գրամ՝ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկ սննդամթերքում
Շաքար (մոնո- և երկսախարիդների ընդհանուր քանակությունը)	Ցածր պարունակություն	Շաքարը կազմում է 5 գրամից ոչ ավելի 100 գրամ՝ կոշտ սննդամթերքում կամ 2,5 գրամից ոչ ավելի 100 մլ հեղուկ սննդամթերքում
Շաքար (մոնո- և երկսախարիդների ընդհանուր քանակությունը)	Առանց ավելացման	Սննդամթերքի արտադրության ժամանակ դրա մեջ չեն ավելացնում մոնո- կամ երկսախարիդներ՝ որպես այդ սննդամթերքի բաղադրիչ: Եթե շաքար է առկա այդ սննդամթերքի մեջ՝ որպես բնական բաղադրիչ, ապա մականշվածքի վրա պետք է նշել՝ Ներառում է բնական ծագման շաքար
Շաքար (մոնո- և երկսախարիդների ընդհանուր քանակությունը)	Ներառում է միայն բնական շաքար	Սննդամթերքի բաղադրության մեջ առկա է միայն բնական շաքար
Սննդային մանրաթել	Աղբյուրը	Սննդային մանրաթելի պարունակություն 100 գրամ կոշտ սննդամթերքում՝ 3 գրամից ոչ պակաս, կամ 100 մլ հեղուկում՝ 1,5 գրամից ոչ պակաս
Սննդային մանրաթել	Բարձր պարունակություն	Սննդային մանրաթելի պարունակությունը 100 գրամ կոշտ սննդամթերքում կազմում է 6 գրամից ոչ պակաս, կամ 100 մլ հեղուկում՝ 3 գրամից ոչ պակաս
Վիտամիններ և հանքային նյութեր	Աղբյուրը	Վիտամինները և հանքային նյութերը կազմում են չափահաս մարդու՝ վիտամինների և հանքային նյութերի օրական միջին պահանջի 15 տոկոսից ոչ պակասը՝ 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 7,5 տոկոսը՝ 100 մլ հեղուկում կամ մեկ բաժնում
Վիտամիններ և հանքային նյութեր	Բարձր պարունակություն	Վիտամինները և հանքային նյութերը կազմում են չափահաս մարդու՝ վիտամինների և հանքային նյութերի օրական միջին պահանջի 30 տոկոսից ոչ պակասը՝ 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում կամ մեկ բաժնում
Խոլեսթերին	Ցածր պարունակություն	Խոլեսթերինը 100 գրամ կոշտ սննդամթերքում կազմում 0,02 գրամից ոչ ավելի կամ 100 մլ հեղուկում՝ 0,01 գրամից ոչ ավելի, եթե պահպանվել է սննդամթերքում 100 գրամ կոշտ սննդի դեպքում՝ 1,5 գրամից ոչ ավելի հագեցված ճարպաթթուների կամ 100 մլ հեղուկում ՝ 0,75 գրամից ոչ ավելի հագեցած ճարպաթթուների պարունակության պահանջը
Խոլեսթերին	Չկա	Խոլեսթերինը 100 գրամ կոշտ սննդամթերքում կազմում 0,005 գրամից ոչ ավելին կամ 100 մլ հեղուկում՝ 0,005

		գրամից ոչ ավելի, եթե պահպանվել է սննդամթերքում 100 գրամ կոշտ սննդի դեպքում՝ 1,5 գրամից ոչ ավելի հագեցված ճարպաթթուների կամ 100 մլ հեղուկում ՝ 0,75 գրամից ոչ ավելի հագեցած ճարպաթթուների պարունակության պահանջը
Օմեգա – 3 ճարպաթթուներ	Աղբյուրը	Օմեգա – 3 ճարպաթթուների ընդհանուր քանակությունը կազմում է 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում՝ 0,2 գրամից ոչ պակաս, իսկ բուսական և կենդանական ճարպերի և յուղերի դեպքում օմեգա -3 ճարպաթթուն կազմում է 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում՝ 1,2 գրամից ոչ պակաս
Օմեգա – 3 ճարպաթթուներ	Բարձր պարունակություն	Օմեգա – 3 ճարպաթթուների ընդհանուր քանակությունը կազմում է 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում՝ 0,4 գրամից ոչ պակաս, իսկ բուսական և կենդանական ճարպերի և յուղերի դեպքում օմեգա -3 ճարպաթթուն կազմում է 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում՝ 2,4 գրամից ոչ պակաս
Նատրիում (կերակրի աղ, նատրիումի քլորիդ)	Ցածր պարունակություն	Նատրիումի 0,12 գրամից ոչ ավել քանակություն 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում (կամ դրա համարժեք քանակություն կերակրի աղում): 100 մլ ջրում (բացառությամբ բնական հանքային ջրի) նատրիումի՝ 2 մգ-ից ոչ ավելի քանակություն
Նատրիում (կերակրի աղ, նատրիումի քլորիդ)	Շատ ցածր պարունակություն	Նատրիումի 0,04 գրամից ոչ ավել քանակություն 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում (կամ դրա համարժեք քանակություն կերակրի աղում): Նշումը ընդունելի չէ ջրի համար կիրառության դեպքում (այդ թվում՝ բնական հանքային ջրերի դեպքում)
Նատրիում (կերակրի աղ, նատրիումի քլորիդ)	Չկա	Նատրիումի 0,005 գրամից ոչ ավելի քանակություն 100 գրամ կոշտ սննդամթերքում կամ 100 մլ հեղուկում (կամ դրա համարժեք քանակություն կերակրի աղում)

ՏԵՂԵԿԱՆՔ

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին տեղեկանքի լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 25.05.2005թ. N 679-Ն, 25.10.2007թ. N 1282-Ն, 21.12.2006թ. N 1838-Ն, 13.12.2007թ. N 1602-Ն, 07.07.2011թ. N 993-Ն, 28.09.2006թ. N 1544-Ն, 03.11.2005թ. N 1928-Ն, 21.12.2006թ N 1925-Ն,19.10.2006թ. N 1560-Ն,28.09.2006թ. N1392-Ն, 11.01.2007 N 22-Ն և 11.06.2009թ. N 662-Ն որոշումներում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծմանը և քննարկմանը Հասարակության մասնակցության մասին

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին հասարակությունը չի իրազեկվել և նախագծի մշակմանը մասնակցություն չի ունեցել:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

«Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Մաքսային Միությանն անդամակցության նախապատրաստման աշխատանքներով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքի մակնշումը ներառող տեղեկատվությունը սահմանված է «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սակայն դեռևս որևէ իրավական ակտով սահմանված չեն պարտադիր մակնշման ենթակա տեղեկատվության մակնշման միասնական ձևեր, կանոններ և պահանջներ:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման համար հիմք է ընդունվել Եվրասիական տնտեսական համագործակցության մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 881 որոշումը և բխում է իրականացվող Հայաստանի Մաքսային Միությանն անդամակցության պետական քաղաքականությունից, ըստ որի անհրաժեշտ է սննդամթերքի պարտադիր մակնշման վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխանեցնել Մաքսային Միության ընդունված պահանջներին:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավման նպատակով սույն որոշմամբ սահմանվում են Մաքսային Միության պահանջներին համապատասխան սննդամթերքի մասին պարտադիր տեղեկատվության մակնշմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև սննդի շղթայի մակնշման համար պատասխանատու օպերատորների պարտականությունները:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Իրավական ակտի նախագծի մշակումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Սույն որոշման նախագծի ընդունմամբ սննդամթերքի վերաբերյալ պարտադիր տեղեկատվության մակնշման պահանջները կհամապատասխանեցվեն Մաքսային Միության պահանջներին, կապահովվի սննդամթերքի վերաբերյալ հավաստի, ամբողջական և մատչելի տեղեկատվություն ստանալու սպառողների իրավունքը, ինչպես նաև կօժանդակի ոլորտում գործող տնտեսավարողներին՝ թողարկվող արտադրանքի արտահանման խոչընդոտները հաղթահարելու և Մաքսային Միության շուկային ինտեգրվելու գործում: